

Առողջապահություն

2007թ. Հիմնադրամը ստանձնել է շուշեցի 5 շահառուների առողջական խնդիրների լուծումը՝ օրթոպեդիկ վիրահատական միջամտություն, տեսողության կարգավորում, ֆիզիոթերապևտիկ վերականգնում, վնասվածքաբանական օգնություն և շտապ օգնություն: Բացի այդ Շուշիում գործող բժշկական հաստատություններին Հիմնադրամը պարբերաբար տրամադրում է անվճար դեղորայք:

Հիմնադրամը մտադիր է շարունակել Շուշիի բնակիչների առողջական առավել հրատապ խնդիրների լուծումը նաև ապագայում: Իսկ Հիմնադրամի կողմից վերակառուցվող պատմական «Կանաչ» դեղատան բացումից հետո, ինչը նախատեսված է 2008թ. ամռանը, քաղաքն ապահովված կլինի ժամանակակից դեղատնով՝ բնակչությանը սուբսիդավորված գներով դեղորայք տրամադրելու նպատակով: